

ԶԱՐՄԱՅՐ ՆԱՀԱՊԵՏԻ ԵՎ «ՔԱՂԴԷԱՅԻՈՅ»
ԱՐՔԱՅԱՅԱՆԿԻ ՇՈՒՐՋ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հայոց Ջարմայր նահապետը հիշատակված է որպես Տրոյական (Եդիական, Իլիական) պատերազմի մասնակից: Նրա վերաբերյալ այնտեղ ասվում է. 1. «Ջարմայր. սա օգնական Պրիամու ի Տեւտամայ առաքեալ ընդ եթովպացի գորուն» մեռանի ի քաջացն Հելլենացոց»: ¹ 2. «Թէ Եդիական պատերազմն առ Տեւտամաւ. եւ մեր Ջարմայր ընդ եթովպացի գորուն լինել սակաւուք, եւ ի նոյն մահ»: ² 3. «Եւ մեր Ջարմայր ի ծառայութեան Ասորեստանեայց սակաւուք ընդ եթովպացի գորուն օգնական Պրիամու, եւ անդ ի քաջացն Հելլենացոց վիրաւորալ մեռանի»: ³ Ինչպէս տեսնում ենք, Մովսես Խորենացին հայոց Ջարմայր նահապետին համարում է ոչ միայն Տրոյական (Եդիական) պատերազմի մասնակիցը, այլև Ասորեստանի Տեւտամու թագավորի հպատակը: *Տեւտամու* անունը բերված է նաև նրա հիշատակած «Քաղդէացոց» արքայացանկում: Հայտնի է, որ մեր պատմահայրը Շամիրամի մահվանը հաջորդած դէպքերը շարադրում է ըստ անհայտ հեղինակի գործ «Պիտոյից հյուսման պատմության» («ի Հիւսման պատմութենէ Պիտոյից»-Ա, ԺԹ), իսկ Եբրայեցվոց և Քաղդացվոց արքայացանկերը բերում է գերագանցապէս Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ից: ⁴

Արևելագետներին վաղուց հայտնի է, որ *Տեւտամու* անունով թագավոր Ասորեստանը չի ունեցել, իսկ *Տեւտամու*-ը առհասարակ ասորեստանյան արքայերենով ստուգաբանվող անուն չէ: Այսուհանդերձ, կարծում ենք, որ իրավացի էր ակադեմիկոս Ս.Երեմյանը, երբ Տրոյական պատերազմին հայերի մասնակցության մասին ավանդության մեջ պատմական հենք էր տեսնում: Նա գրում է. «Համաձայն այդ ավանդության, Ջարմայրը տրոյացիներին օգնության է ուղարկվել Ասորեստանի թագավոր Տեվտամի կողմից: Այս վկայությունը հիշեցնում է հունական այն վերսիան, որի համաձայն՝ տրոյացիների դաշնակիցներից մեկն էր Մեմնոնը... Այս Մեմնոնին Պրիամոսին օգնության էր ուղարկել Տեվտամը, որին անորոշ ձևով անվանում են Ասորեստանի կամ Ասիայի թագավոր... Ուշագրավ է, որ Պրիամոսի դաշնակից պելասգյան առաջնորդները նրան օգնության էին եկել տրոյական Լաբիսայից և Տեսամի թոռներն էին»: ⁵ Մեր կարծիքով, «Ասորեստանի կամ Ասիայի

¹ «Մովսիսի Խորենացոյ պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ *Խորենացի*), Եր., 1981, գիրք Ա, գլ. Ի:

² *Նույն տեղում*, Ա, լր:

³ *Նույնը*:

⁴ *Мовсес Хоренаци, История Армении, перевод с древнеармянского языка, введение и примечания Г.Саркисяна, Ер., 1990, С. 228, пр. 130, 131.*

⁵ *Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, թիվ 2, էջ 42:*

թագավոր» անվանված Տևտամուր իրակառույց էղել է խեթական դարաշրջանի արևմտյան Փոքր Ասիայում (որին էր միայն նախապես վերաբերում *Ասիա* անունը)⁶ իշխած սեպագրային Ասուվա երկրի թագավորը, որի սեպագիր *Aššua* (կարդա՝ *Assua*) անունը հետագայում է իր տեղը զիջել ավելի հանրածանոթ *Ասիա* ('*Assia*) և *Ասորեստան* (հուն. 'Ασσυρία/**Assuria*) անուններին:⁷

Խեթ թագավոր Թուդխալիա IV-ի (մ.թ.ա. 1265-1235թթ.) օրոք խեթերին հպատակված Ասուվան ընդգրկում էր 22 մանր երկրներ՝ ներառյալ *Taru(ս)isa*-ն և *Uilšija*-ն, որոնք համարվում են Հումբրտի «Իլիական»-ից հայտնի Տրոյան և Իլիոն/Իլիոսը:⁸ Խեթական արձանագրություններից պարզվում է, որ հարեան Ասուվայում գերիշխելու գործում խեթերի հակառակորդը էղել է Ախիյավան (աքայացիների՝ միկենյան հույների պետությունը):⁹ Ախիյավան և իր դաշնակիցներն են էղել Տրոյան կործանողները,¹⁰ իսկ նրանց հակառակորդ խեթերը, բնականաբար, օգնել են Ասուվային (տրոյացիներին), և օգնողների մեջ է էղել Զարմայր Նահապետը: Տրոյական պատերազմում տրոյացիներին՝ հայերի ցուցաբերած օգնության մասին հայկական ավանդության պատմականությունը կողմնակիորեն հաստատվում է խեթական սեպագիր արձանագրությունների այն տվյալների միջոցով, որոնցում խոսվում է խեթական բանակում ծառայած հայասացիների ու Հայկական լեռնաշխարհի բնակիչ մանդա, սալա, խեմուա և այլ ցեղերից հավաքագրված վարձկան կառավարտիկների մասին:¹¹ Խեթ թագավոր Մուրսիլի II-ի վկայությամբ, երբ Հայասա-Ազիի դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ խեթական բանակը մոտեցել էր ազիական Դուկամա քաղաքին, այս քաղաքի ավագները դիմավորել էին իրեն և ասել. «Մեզ, մեր տեր, հավաքվածներիս վերցրու և մեզ ուղարկիր Խաթթուսա քաղաք, մեզ դարձրու հետիտոն զինվորներ և կառավարտիկներ»: ¹² Սրանք պատահական ասված խոսքեր չեն: Դուկամայի բնակիչներին քաջ հայտնի է էղել, որ խեթ թագավորներն իրենց բանակների շարքերը համա-

⁶ Անգամ վաղմիջնադարյան հայ մատենագրության մեջ կարելի է հանդիպել *Ասիա-ի* (*Ասիաստան ձևով*) այդպիսի ընկալման (տե՛ս «Մեբեռսի եպիսկոպոսի պատմություն», Եր., 1939, էջ 8-9-ում՝ երիցս- Ս.Պ):

⁷ Պեարոսյան Ս., Պատմականը Զարմայր Նահապետի մասին ավանդագրություն, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր», պրակ 2, Գյումրի, 2009, էջ 28-32:

⁸ Гервн О., Хетты, М. 1987, С. 37, 52-53: Քոսյան Ա., Խեթական տերությունը և Ախիսիյավան (Տրոյական պատերազմը), Եր., 1977, էջ 26-27:

⁹ Гервн О., նշվ. աշխ., էջ 51-52, Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 23-27:

¹⁰ Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 30-32:

¹¹ «Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 199: Խեթ թագավորներին ծառայած Հայկական լեռնաշխարհի բնակիչ կառավարտիկներին ի նկատի առնելով է Բ.Դյակոնովը գրում. «Չիականքերի միջոցով մարտ վարելու արվեստը Փոքր Ասիա կարող էր թափանցել նաև շրջանցելով խուրիներին, օրինակ, «Մանդա ցեղի» կամ «Մալա ցեղի» նման ինչ-որ վարձկան զորքի միջոցով» (Дьяконов И. Предыстория армянского народа, Ер., 1968, С. 43):

¹² "Keilschrifttexten aus Boghazköi (Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orient Gesellschaft)," Leipzig-Berlin, 1916-1926, IV, 4, III, 22-23; «Հայ խողովրդի պատմության քրեւտումատիա», հ. I, Եր., 1981, էջ 11:

լրում էին նաև Հայկական լեռնաշխարհի բնակիչ հետիոտն զինվորներով և կառավարտիկներով:

Ասորեստանի Թիզբարթիպասար I թագավորի վկայությամբ, իր գահակալումից (մ.թ.ա. 1115թ.) 50 տարի առաջ «Խեթերի երկրի անհնագանդ մարդիկ (զինվորները)» մուշկերի հետ միասին գրավել էին Արևմտյան Տիգրիսի ձախափնյա, իսկ իր ժամանակ՝ նաև աջափնյա բնակավայրերը:¹³ Որ այդ «անհնագանդները» եղել են Հայկական լեռնաշխարհի բնակիչներ, ցույց են տալիս նրանց անվանումները *KURUrumaia*^{meš} և *KURKaškaia*^{meš}, այսինքն՝ «ուրումեացի, Ուրումու երկրի բնակիչ» և «կաշկացի, Կաշկու երկրի բնակիչ»: Սրանցից երկրորդների դեմ խեթ թագավորների ձեռնարկած արշավանքներից պարզվում է, որ սրանք բնակվել են Արևելապոնտական լեռնաշղթայում,¹⁴ իսկ առաջինների հայրենիքը գտնվում էր Հայկական Տավրոսում՝ կենտրոն ունենալով Մասնա լեռների «Ներքին Ուրումու» երկիրը:¹⁵ Հետազոտողների կողմից անհրաժեշտ ուշադրության չարժանացած «անհնագանդ» որակումը ցույց է տալիս, որ Ուրումու և Կաշկու երկրների զինվորները Խեթերի երկրում ծառայելիս ապստամբել էին խեթական թագավորի դեմ:

Խեթական բանակում ծառայած հայկական ցեղերից երեքի ներկայացուցիչների վերաբերյալ նշելով, որ դրանք վարձկան կառավարտիկներ էին և նախապես ազատված էին հարկերից, Ի. Դյակոնովն ավելացնում է. «Մանդա ցեղը չի տեղորոշվում: Ինչ վերաբերում է Մալային (Մալուա) և Խեմնուվային (Խիմուա, Խիմնե և այլն), ապա այդ երկու ցեղերը (կամ մարզերը) պետք է որոնել Հայկական լեռնաշխարհում Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև ավելի արևելք»:¹⁶ Դյակոնովի կողմից այս տողերի գրվելուց առաջ Քր. Ղափանցյանը և Ա. Խաչատրյանը ցույց էին տվել, որ հայ նախարարական Մանդակունի տոհմը ծագում է մանդա ցեղից,¹⁷ իսկ նախարարական այս տոհմի ժառանգական տիրույթը Արշաունիք գավառն էր, որը նույնպես գտնվում էր Եփրատի և Վանա լճի միջև: Ընդ որում, Քր. Ղափանցյանը շեշտում է, որ այդ Մանդա և Մալա ցեղերը եթե միասին են հիշատակված խեթական կողերքում, ապա նրանցից սերած Մանդակունի և Մաղկունի/Սլկունի նախարարական տոհմերն էլ միասին են հիշատակվում թե՛ Վաղարշակ թագավորի կողմից նախարարություններ հաստատելու ժամանակ (Խորենացի, Բ, ք), թե՛ Գահնամակում (գրադեցնելով համապատասխան

¹³ Дьяконов И. Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), М., 1960, NN 10-13.

¹⁴ Хачатрян В. Восточные провинции Хеттской империи, Ер., 1971, С. 87-90.

¹⁵ АВИИУ, N 23: Երեմյան Ս., Հայերի ցեղամիությունը Արևև-Շուպրիա երկրում, «Պատմաբանասիրական հանդես», 1958, թիվ 3, էջ 62:

¹⁶ Дьяконов И. Предыстория армянского народа, С. 53.

¹⁷ Ղափանցյան Գ., Հայրց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 45-46: Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրային շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 223-225: Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 40:

նաբար 47-րդ և 48-րդ գահերը), թե՛ Ջորանամակում («Արևմտյան դռան» նախարարությունների շարքում՝ համապատասխանաբար 14-րդ և 15-րդ տեղերում):¹⁸

Մովսես Խորենացու բերած «Համեմատութիւն ծննդաբանութեան ազգիս մերոյ ընդ Եբրայեցոցն եւ ընդ Քաղղէացոցն մինչեւ ցՄարդանապատոս...»¹⁹ կոչվող զուգահեռ արքայացանկերից «Քաղղէացոց»-ի վերջին անունը՝ *Մարդանապատոս*-ը հունական աստվածաշնչային ձևն է Աստրեստանի Աշուրբանիպալ (մ.թ.ա. 665-635թթ.) թագավորի անվան: Այս պատմական անձը, բնականաբար, աստրեստանյան անուն է կրում, որը Ասուվայի հետ կապ չունի: Բայց ի տարբերություն նրա *Մարդանապատոս/Աշուրբանիպալ* անվան, Զարմայրի ժամանակակից «աստրեստանցի» թագավորի *Տեստամոս* «*teut-am-os*» անունը ասուրական (աքադական) ծագում չունի: Այս արքայանվան հիմքային *Տեսա*- բաղադրիչի մեջ (սրան հավելված են *-am-* վերջածանցը և հունական անուններին բնորոշ *-os* վերջավորությունը՝ ուղղ. հոլ.) մեկը տեսնում ենք *h.-ե.* «*teuta* «ժողովուրդ» նախածնի ժառանգորդը՝ պահպանված թրակյան *Тюста, Тюстн, Туста*,²⁰ գալլական *Toutonos* անձնանուններում և հին բարձր գերմ. *diot* «ժողովուրդ», օսկ. *touto* «համայնք», լիտվ. *tauta* «ժողովուրդ», գոթ. *Þiudans* «արքա» («ժողովրդապետ») և այլ բառերում:²¹ Տեստամոսին հաջորդած թագավորի *Տեստեոս* «*teut-ē-os*» անունը²² նս պարունակում է «*teut-*» հիմքը, որին հավելվել են *-ē-* վերջածանցը (հանդիպում է «Քաղղէացոց» արքայացանկի այլ անուններում նս) և *-os* վերջավորությունը: Քանի որ հիշյալ անուններով Աստրեստանի (ինչպես նաև Քաղղեա//Բաբելոնի) թագավորներ գոյություն չեն ունեցել, ուստի իրավամբ կարելի է մտածել, որ ոչ միայն Տեստամոսի և Տեստեոսի, այլև «Քաղղէացոց» կոչված արքաներից շատերի դեպքում գործ ունենք Ասուվայի իրարահաջորդ արքաների կամ նրա տարբեր շրջաններում (միաժամանակյա՞) իշխած ցեղապետ-արքաների հետ: Վերջին դեպքում ուշագրավ է հունական աղբյուրների հաղորդումները Տրոյայի թագավոր Պրիամոսի դաշնակիցների թվում փոքրասիական Լարիսսա քաղաքից եկած Տեստամոսի (*Τεσταμος*) թոռների մասին: Ի դեպ, սրանց պապի անունը գրեթե նույնական է նաև հունական

¹⁸ Адонц Н. Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, С. 249-250, 251-252, Ղափանցյան Գ., *ևշվ. աշխ.*, էջ 46: Տրոյական պատերազմին մասնակցած զորամասը պետք է բաղկացած լիներ ոչ թե «եթովպացի»-ներից, այլ հայ կառավարողներից և կառավարներից՝ «*etjop-*ներից, որոնք լինելով խեթական ծառայության մեջ, խեթ թագավորներին ենթակա Ասուվայում (Տրոյան և Բլիոնը ներառյալ) խեթերի և հուներոյան տրոյացիների հետ միասին կռվել են հույն արայացիների՝ Ախիլասի դեմ (տե՛ս Պետրոսյան Ս., Պատմականը Զարմայր նահապետի մասին ավանդազրույցում, էջ 28-32):

¹⁹ Խորենացի, Ա, ժթ:

²⁰ Ջանուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները (այսուհետև՝ ՀՀՀԼ), Եր., 1970, էջ 75:

²¹ Гамкрелядзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ), т. I-II, Тб., 1984, т. II, С. 743.

²² Խորենացի, Ա, ժթ:

ուրիշ ավանդազրույցներում հիշատակված և թեսալական Լարիսայում երբեմն իշխած Տետամիսի (Τεταμις, Τεταμιδας) անվան հետ:²³

Դժվար չէ նկատելը, որ «Քաղղէացոցն» արքայացանկի անուններից շատերը առաջին իսկ հայացքից բացահայտում են արադերեների խորթ, բայց հնդեվրոպական լեզուներին հարազատ իրենց բնույթը: *Տեստամու* և *Տեստէու* անունները մատնացույց են անում նախ և առաջ այդ երկու անուններին ծնունդ տված լեզվի պատկանելությունը թրակա-պելասգյան ընդհանրությանը: Մա պատահական լինել չի կարող, երբ ի նկատի ենք առնում ինչպես թրակերեների և պելասգերեների մերձավոր կապերը,²⁴ այնպես էլ այն իրողությունը, որ «Տրոյայի պատմության մեջ նս կարևոր դեր է խաղացել թրակյան տարրը»,²⁵ որ Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքն ավելի վաղ բնակեցրել էին պելասգները:²⁶ Ստորև կբերենք «Քաղղէացոց» արքայացանկից ուրիշ մի շարք անուններ,²⁷ որոնք ևս բացահայտ հնդեվրոպական՝ մանավանդ թրակա-պելասգյան ծագում ունեն:

3. *Առալիռու***aral-i-os* արքայանվան մեջ առանձնանում է **aral-* հիմքը, *-i-* վերջածանցը և *-os* վերջավորությունը: Մրա հիմքի տարբերակներին կարելի է հանդիպել հնդեվրոպական տարբեր լեզուներում «արծիվ» նշանակությամբ: Դրանցից են թրակ. **orol-* (*Ολορος, Oroles* անձնանուններում), հին պալ. *orlū*, հրգ. *aro*, հին իտլ. *irar*, լիտվ. *arėlis, erėlis*, լատիշ. *ērglis*, պրուս. *arelis*, իւեթ., պալ. *haraš* և այլն:²⁸ Հ.-ե. **or-* արմատից ծագած այս բառերի շարքն է դասվում նաև հայ. *ուրուր* «ցին» բառը:²⁹ Կարծում ենք, որ սրանց արմատակիցն է լինելու նաև առասպելական թևավոր շների՝ շնարծիվների, *արալեզ***արալ-եզ* (տարբերակը՝ *ալեզ*) անունը: Նախկինում արված ստուգաբանությունները մերժվել են Հ.Աճառյանի կողմից:³⁰ *Առալիռու* արքայանվան իմաստը լինելու էր այնպիսին, ինչպիսին է հայ. *Արծուի* (<արծիվ-ի) անձնանվան իմաստը:

4 և 5. *Բալէու, Բալէու***bal-ε-os*, որտեղ *bal-*ը արմատ է, *-ε-*ն վերջածանց, *-os-*ը վերջավորություն: Հ.-ե. **bhel-* «փայլել» նախաձևից ծագած **bal-* արմատը հաճախակի է հանդիպում թրակյան անձնանունների, ցեղանունների և դիցական մակդիրների մեջ. հունո. *Βαλας, Βαλης, Balius, Βαληος* (թրակյան Ջևս//Յուսիստերի մակդիրն էր), *Βαλις* (թրակյան Դիոնիսոսի մակդիրն էր):³¹ Հիշյալ անձնանունների տերերը դրանցով, ըստ երևույթին, համարվել են Ջևսի և Դիոնիսոսի պաշտամունքին առնչվող անձինք:

²³ Томсон Дж. Исследования по истории древнегреческого общества. Доисторический Эгейский мир, М., 1958, С. 259.

²⁴ Георгиев В. Исследования по сравнительно-историческому языковедению (այսուհետև՝ *Георгиев*), М., 1958, С. 140-141, ՀՀՀԼ, էջ 47, 83:

²⁵ Նույն տեղում, էջ 141, ՀՀՀԼ, էջ 44:

²⁶ ՀՀՀԼ, էջ 82:

²⁷ Խորենացի, Ա, ժթ:

²⁸ Георгиев, С. 121, ИЯИ, т. II, С. 538.

²⁹ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. III, Եր., 1977, էջ 618:

³⁰ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 260-261:

³¹ ՀՀՀԼ, էջ 52, 55, 70, 79:

6. *Բաղոստոռէս* <*bal-o-tor-ēs արքայանվան առաջին բաղադրիչը նույնական է թրակյան հիշյալ անձնանունների, ցեղանունների և դիցանվանական մակդիրների համապատասխան՝ հ.-ե. *bhel- «փայլել», արմատից ծագած բաղադրիչների հետ: Այս արքայանվան երկրորդ բաղադրիչը հողակապ է, իսկ երրորդ բաղադրիչը՝ -tor-ը, հավանաբար, «տուրք» է նշանակում: Հմմտ. թրակ. *ταρας* բառը և համապատասխան բաղադրիչները *Βελι-ταρας*, *Βου-ταρας* անձնանուններում և *Συρο-τερης* դիցանվան մեջ: Դրանք բխեցվում են հ.-ե. *dō- «տալ» (որից՝ *do-ro-, *dō-ro- «նվեր, տուրք») արմատից:³² Հմմտ. մանավանդ նույնարմատ բառերից բաղկացած նույնիմաստ *Բաղո-ստոռ-էս* արքայանունը և թրակյան *Βελι-ταρ-ας* անձնանունը: Այսպիսով, *Բաղոստոռէս* արքայանվան իմաստը կամ «Ջեսի տված, Ջեսստուր» (Ջեսի *Βαλης* մակդիրից), կամ «Դիոնիսոսի տված, Դիոնիսաստուր» (Դիոնիսոսի *Βαλις* մակդիրից) է: Իմաստի տեսանկյունից հմմտ. հին իրան. *Bagadāta* (>հայ *Բագարատ*>*Բագրատ*), *Քրիստոսաստուր*, *Աստվածաստուր*, *Խաչաստուր*, *Տիրաստուր*, սլավոն. *Bogdan* և այլն:

7 և 8. *Ղամպարիտէս* <*lamp-ar-it-ēs, *Ղամբարիս* <*lamb-ar-is արքայանունները «Քաղղէացոց» արքայացանկում կրում են երկու տարբեր անձինք: Այս անունների *lamp-//*lamb- հիմքը նույնական է պելասգյան ծագում ունեցող հունարեն *λαμπάς* «ջահ»³³ բառի հետ: Վերջինիս -ar վերջածանցով *lamp-ar-//*lamb-ar ձևից փոխառյալ է (միջնորդավորմամբ) հայ. *լամպար*//*ղամբար*//*ղամպար* «ջահ, ճրագ, լույս, բոց» բառը, որից ունենք անգամ բարբառային (Քղի) *ղամբարուն* «հրաբորբոք» բառը:³⁴ Եթե *Ղամբարիս*//*Lambaris-ը ուղղակի կարող է «ջահ» կամ «լույս» նշանակել, ապա *Ղամպարիտէս*//*Lamparitēs-ը (կազմված -it վերջածանցով) պետք է որ «լուսակիր» կամ «ջահակիր» նշանակեր:

9. *Դեոկիդոս* <*der-kul-os: Այս անվան երկրորդ բաղադրիչի համար հմմտ. թրակյան *Κουλα*, *Κουλια*, *Κουλιος* անձնանունները՝ ծագած հ.-ե. *geu-l- «այրվող ածուխ» նախածիցից:³⁵ Իսկ արքայանվան առաջին՝ *դեռ*-//*der-, բաղադրիչը նույնն է թրակյան *Δερζελας*, *Δερζελας*, *Δερζαλας*, *Derzenus* անձնանունների առաջին բաղադրիչների հետ: Ի դեպ, սրանցում առկա է ոչ թե *Derz-*, այլ *Δερ-* բաղադրիչը. հմմտ. *Der-zen-us* և *Diu-zen-es* (վերջինս ունի իր հուն. *Διο-γέν-ης* զուգահեռը, որնցում թրակ. -zen-//հուն. -γέν-<հ.-ե. *g'enēs-):³⁶ Արքայանվան *der- բաղադրիչը կարող էր ծագել հ.-ե. *dher- «պահել, բռնել» արմատից, որից է փոյուզ. *δαρειος* «պահպանող» բառը:³⁷ Այս դեպքում *Դեոկիդոս*//*Derkulos* արքայանվան իմաստը լինում է «կրակ պահող, կրակ պահպանող, կրակապահ»՝ քուրմ-արքաների բն-

³² ՀՀՀԼ, էջ 51:

³³ *Георгиев, С. 103; ՀՀՀԼ, էջ 94:*

³⁴ *ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 262-263:*

³⁵ ՀՀՀԼ, էջ 55:

³⁶ *Георгиев, С. 120, 133.*

³⁷ ՀՀՀԼ, էջ 108:

բոշ մի անուն: Այս առթիվ հիշենք Ատրպատականի թագավորության հիմնադիր և անվանադիր Ատրպատի անունը,³⁸ որը «կրակի պետ» է նշանակում:

10. *Պեռիտիադու* <*peri-ti-as (-ades): Այս արքայանվան երկրորդ բաղադրիչը նույնական է թրակյան *Τι-τορμος*, *Τι-τρημος* անձնանունների առաջին բաղադրիչների հետ, որոնց հիմքում տեսնում են հ.-ե. *dei- «վաղել, շողալ» արմատը (այն հիմքն է նաև հայ. *ալի* «օրվա լույս մասը, ցերեկ» բառի):³⁹ Հմմտ. թրակ.-դակ. *Διν* «աստված, Ջես», պալ. *Tiyaz* «Արևի աստված, արև», փռյուզ. *τιος* «աստծու»:⁴⁰ Արքայանվան առաջին բաղադրիչը նույնական է թրակյան *Παρις*, *Παρος*, *Πορις* անձնանունների հիմքային մասի և թրակյան հետևյալ անձնանունների երկրորդ բաղադրիչների հետ. *Deos-por*, *Zi-par-us*, *Zi-per*, *Muca-por*, *Nato-por-us* և այլն: Մրանք ծագում են հ.-ե. *puer- (կամ *pouer-) նախաձևից, որից են նաև դակ. *per* «որդի», լատին. *puer* «տղա, որդի, պատանի» բառերը:⁴¹ Հնդեվրոպական բերված նախաձևերի հիմքում էլ հ.-ե. *per- «ծնել» արմատն է:⁴² Ուրեմն, *Պեռի-տիաս* (-դես) արքայանունն ունի «որդի լույսի, ծնունդ լույսի, լուսածին» իմաստը:

11. *Ղաուսթենիս* <*lauo-sten-is անվան առաջին բաղադրիչի հիմքում հ.-ե. *laHyo- «ժողովուրդ, զորք», «արշավանք» արմատն է. հմմտ. հուն. *λαῖός* «ժողովուրդ», միկեն. հուն. *ra-wa-ke-ta/*lāwāgetās* «զորավար»//փռյուզ. *lawagetaei*:⁴³ Փռյուզիայի Միդաս թագավորի *Λαυατασι* «ժողովրդասեր» (ըստ Պ.Կրեչմերի)⁴⁴ մակդիրում ևս *Lav-* նշանակում է «ժողովուրդ» (հմմտ. իլյուր. *lav-* «ժողովուրդ»):⁴⁵ Եթե *Ղաուսթենիս* անունը «ժողովրդասուն» է նշանակում, ապա նրա երկրորդ -*սթեն*, բաղադրիչը կարելի է արմատակիցը համարել հայ. *ստին-ք*, *սան*, *սին*, *սուն* և հուն. *στίνιον* «կուրծք» (ըստ Հեսիքոսի) բառերի՝ ծագած հ.-ե. *psen-/*pson/*psn- (ավելի նախնականը *pstēn-)⁴⁶ նախաձևից: Անվան բուն իմաստի պարզաբանման տեսանկյունից ուշագրավ են հայ. *սան* «իբր զավակ, ձեռքի տակ սնուցած ու մեծացրած տղա» և *սին*, *սուն* «պահել, սնուցանել, մեծացնել» բառերը:⁴⁷

12. *Ալտադոս* <*alt-ad-os: Այս արքայանվան առաջին բաղադրիչը նույնական է թրակյան *Ζει-αλθ-ης* անձնանվան երկրորդ բաղադրիչի հետ, որը բխեցվում է հ.-ե. *alt- (<*al-t-) «աճ(եցն)ել, սնել» նախաձևից:⁴⁸ Անվան երկրորդ -ad-, բաղադրիչը, հավանաբար, թրակա-պելասգյան զուգահեռն է մակեդոն. *άδθ* «երկինք»,

³⁸ *Strabo*, XI, 13, 1 (*Մտրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Եր., 1940, էջ 47*): Հմմտ. նաև *ավեստ. āθravan-* «քուրմ», *հին հնդկ. ātharvā* «քուրմ-կախարդ», որոնց հիմքում տեսնում են «կրակ» (*ավեստ. ātar-*) նշանակող բառերը (*ИЯИ, т. II, С. 788, стр. 4*):

³⁹ *ՀՀՀԼ, էջ 55*:

⁴⁰ *Георгиев, С. 128, 147; ՀՀՀԼ, էջ 66, 108, 116, 138*:

⁴¹ *Георгиев, С. 122, 128*.

⁴² *ՀՀՀԼ, էջ 56*:

⁴³ *ИЯИ, т. II, С. 740*.

⁴⁴ *ՀՀՀԼ, էջ 115*:

⁴⁵ *ՀՀՀԼ, էջ 21*:

⁴⁶ *ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 274-275*:

⁴⁷ *ՀԱԲ, հ. IV, էջ 170-171, 251*:

⁴⁸ *ՀՀՀԼ, էջ 69, Георгиев, С. 126*.

ἀδραία «պայծառ երկինք» և հուն. αἰθήρ «եթեր, օդ, երկինք» բառերի⁴⁹ արմատի՝ ծագած հ.-ե. *aidh- (<*ai- «այրել, լուսավորել») նախածնից: Վերջինից է Գ.Ջանուկյանը բխեցնում նաև հայ. այգ «առավոտ» բառը⁵⁰ Այս դեպքում, ասուվական արքայանունը նշանակում է «երկնքի սնած, աճեցրած»//«երկնքի աստծու սնած, աճեցրած»:

13. *Սուսարիս* <*Su-sar-is արքայանունը, մեր կարծիքով, ուղղակի կերպով առնչվում է խոզի հնագույն պաշտամունքին: Եվրոպաբնակ հնդեվրոպական ցեղերից շատերի համար այս կենդանին հազարամյակներ շարունակ մնում էր պաշտելի տոտեմ և աստվածներին մատուցվող սրբազան զոհ: Խոզը (վարագ, խոճկոր) հին հռոմեացիների «խոզ-ոչխար-ցուլ» և «խոճկոր-գառ-հորթ» զոհաբերվող կենդանիների դասական եռյակի մեջ առաջինն էր⁵¹ Եթե թրակա-պելասգյան ցեղերի համար էլ խոզը պաշտելի տոտեմ և զոհաբերության սրբազան կենդանի էր, ապա Մովսես Խորենացու ավանդած «Քաղդեացոց» արքայացանկի *Su-sar-is արքայանունի մեջ դժվար չէ տեսնել *su- «խոզ» բառը՝ արմատակիցը պելասգ. σῦς «խոզ»,⁵² հուն. ὕς, լատին. sūs, հին բարձր գերմ. su, ավեստ. hō նույնիմաստ⁵³ բառերի: Այս բառերի արմատակիցն է լինելու մակերոն. (թրակյան ծագումնով) սոթնոյ «վարագորսի կարճ նիզակ» բառի սո- բաղադրիչը⁵⁴ Այս արքայանունի —սար-//—sar- բաղադրիչը, ըստ երևույթին, ծագում է հ.-ե. *kér- «աճել, սնել» արմատի ստորին *kr-, ձայնդարձից: Սրանց տարբերակներն են առկա ազգակից լեզուների այնպիսի բառերի հիմքում, ինչպիսիք են հայ. սեր, սերմն, հուն. κόρος «ընձյուղ, մատղաշ ճյուղ», լատին creber «խիտ աճած, թավ», լիտվ. šerti «սնուցել», լատին. Ceres «հողագործության հովանավոր դիցուհին» և այլն⁵⁵ Եթե թրակա-պելասգյան ցեղերի համար ևս խոզը պաշտամունքի առարկա տոտեմ է եղել, ուրեմն, *Սուսարիս* արքայանունը կարող էր ունենալ «խոզի սնած, խոզասուն» իմաստը:

14 և 15. *Մամիթոս* և *Մամիդոս* (<*Mam-ith-os, *Mam-id-os): Երկու անձինք են կրել այս անունները: Հավանաբար, դրանք միևնույն արմատից -ith- և -id- վերջածանցներով կազմված անձնանուններ են: Սրանց *mam- արմատը գալիս է մանկական թոթովանքի *mama (<հ.-ե. *ma-ma «մայրիկ» հմնտ. հայ. մա, մամա, մայր, մամ «տատ») բառից, որն են տեսնում նաև թրակյան Μαμα, Mama իգական և Μαμαῖος, Μαμοξίς, Μαμουγής, Mamutzis արական անձնանունների հիմքում⁵⁶ Ըստ երևույթին, այս անձնանունների *mam- բաղադրիչների տակ հասկացվել է թրակացիների Սայր դիցուհին, որը Mā (հ.-ե. *ma, որից՝ *mā-tēr «մայր») անունով

⁴⁹ Георгиев, С. 72.

⁵⁰ ՀՀՀԼ, էջ 35:

⁵¹ ИЯИ, т. II, С. 597.

⁵² Георгиев, С. 94.

⁵³ ИЯИ, т. II, С. 593.

⁵⁴ ՀՀՀԼ, էջ 118:

⁵⁵ ՀԱԲ, հ. IV, էջ 204, 206:

⁵⁶ ՀՀՀԼ, էջ 73:

պաշտովել է նաև Փոքրագիայում և Փոքր Ասիայի այլ երկրներում:⁵⁷ Այս դեպքում աստվածական *Մամիթոս* և *Մամիդոս* արքայանունների մեջ արտացոլված է լինելու նրանց կրողների՝ Մայր դիցուհու պաշտամունքին առնչված լինելու իրողությունը (որպես քուրմ-արքաների): Հմմտ. *Ղեկեարա* դիցուհու անվան նույնպիսի կիրառումը *Ղեկեարիոս*, *Ղեկեար*՝ արական անձնանունների տեսքով և *Արսեմիս* դիցուհու անվան նույնպիսի կիրառումը:

16. *Մասքաղէոս* <mas-khal-ē-os արքայանվան մեջ առկա են *Մաս-* և *-քաղ-* արմատները և *-է-* վերջածանցը: Անվան առաջին բաղադրիչը, ըստ երևույթին, «մեծ» է նշանակում՝ ծագած հ.-ե. *megh- «մեծ» արմատից: Մրանից են ծագում նաև հայ. *մեծ*, հին հեղկ. *մահի*, ավեստ. *maz-*, միջ. պարս. *mas*, հուն. *μέγας*, այր. *maθ* նույնիմաստ բառերը:⁵⁸ Մրանց շարքն են դասվում նաև իլյուր. *maz-* «մեծ» բառը և թրակ. *Μαζαίος*, *Μεζαναία*, *Μεζηνλις*, *Μανι-μαζος*, *Πατου-μασης* անձնանունների նույնիմաստ բաղադրիչները:⁵⁹ Արքայանվան *-քաղ-* բաղադրիչի համար հմմտ. հուն. *χηλή* բառը, որը նշանակում է «ցուլի, այծի երկճուղ ուռք», «գայլի ճիրան, թռչունի մագիլ», «ճանկաձև գործիք կամ արքան», «նետի ծայրի երկճուղ մասը» և այլն:⁶⁰ Քանի որ հուն. *χηλή* բառի հին արտասանությունը եղել է *khele, ուստի ճիշտ է լինելու նրա և հայ. *քեղի-քեղ-ի* բառի գուգադրումը (բայց ո՛չ հայերենը հունարենից փոխառյալ լինելու, այլ հ.-ե. *sgel- «կորացնել, ծռել» արմատից ծագած լինելու տեսանկյունով): *Քեղի* «ղեկ, դեկի վերին փայտը կամ ջրի մեջ մխված մասը» բառի և հուն. *χηλή* բառի կապի առթիվ Հ.Աճառյանը գրում է, որ հունարեն բառի «նշանակությունները բավական են ցույց տալու համար թե փոքրասիական հունարենի մեջ բառս ուներ նաև «ղեկ» կամ նման մի առում»:⁶¹ Այս դեպքում չի բացառվում, որ բառն ունենար փոքրասիական ծագում՝ հունարենին անցած Փոքր Ասիայի արևմուտքի թրակա-պելասգյան ինչ-որ բարբառից: Կարծում ենք, որ *Մասքաղէոս* արքայանունն ունեցել է «մեծ ղեկավար» նշանակությունը՝ «մեծ»-ի (հմմտ. հայ. *մեծ*՝ նաև «շատ, գորեղ, իշխանավոր», այլբան. *maθ* «մեծ», իսկ *maθi* «մեծն»)՝⁶² և «ղեկավար»-ի փոխաբերական իմաստներով:

17. *Սպարեթոս* <spar-eth-os: Մրա առաջին բաղադրիչը թրակերեն *σπαρ* «նիզակ» բառն է՝ առկա թրակյան *Σπαρρα-δοκος* և *Σπαρ-τακος*//*Spar-tac-us* անունների մեջ:⁶³ Վերջինս լատինական ձևն է Հռոմում գլադիատորների և սարուկների ապստամբությունը գլխավորած հանրահայտ Սպարտակի: Մրանց շարքն է դասվում նաև մակեդոնական *Σπορ-ακ-ης* անունը:⁶⁴ Թրակերեն *σπαρ-* բառի հետ միասին հիշյալ անձնանունների համապատասխան մասերը արմատակիցներն են լա-

⁵⁷ *Георгиев, С. 131, 222L, էջ 112:*

⁵⁸ *ՀԱԲ, հ. III, էջ 295:*

⁵⁹ *222L, էջ 61:*

⁶⁰ *ՀԱԲ, հ. IV, էջ 569:*

⁶¹ *Նույնը:*

⁶² *ՀԱԲ, հ. III, էջ 295:*

⁶³ *Георгиев, С. 122.*

⁶⁴ *222L, էջ 75:*

տին. *sparus, sparum* «կարճ նիզակ» և գերմ. *Speer* «նիզակ» բառերի:⁶⁵ Ասուվական *Սպարեթոս* արքայանվան մեջ **spar-* հիմքին հավելվել է *-eth-* վերջածանցը և *-os* վերջավորությունը: *Սպարեթոս* նշանակում է «նիզակավոր, նիզակակիր»: Ի նկատի առնենք, որ հեռում նիզակը նաև պաշտամունքի առարկա էր և ցեղային առաջնորդների կարգավիճակի նշանակ:

18 և 19. *Առմամիթոռնու* < Առմա-Միթոռնու < **arma-Mithrēos*: Այս արքայանվան երկրորդ բաղադրիչի հետ նույնական արքայացանկի *Միթոռնու* անունը հիմք է տալիս *Առմամիթոռնու* անվան այսպիսի բաղադրիչների բաժանման: Մրանցից *առմա-*ն նույնանում է հին հուն. *ἄρμα* «ձիակառք, մարտակառք»⁶⁶ բառի հետ, որն այդպիսի իմաստներով կարող է փոխառյալ լինել փոքրասիական լեզուներից. հմմտ. միկ. հուն. *a-mo* «անիվ» (= **armo*)՝ հին հուն. *ἄρμα-ի* (*harma*) դիմաց: Ազգակից լեզուների արմատակից բառերից հմմտ. նաև հին հուն. *αρμός* «կցվածք, հավելված», լատին. *arma* «հարմարանք, գործիք, զենք», հին հնդկ. *arā-* «անլի ճառագայթ», *aram* «հարմար, բավական», ավեստ *arəθ* «հարմար, համապատասխան», հին պավ. *jarimū* «լուծ» և հայ. *յարմար*:⁶⁷ Վերջինս նախորդների նման *h.-ե.* **ar-*արմատից է՝ «կազմված / նախդիրով, մ՛ աճականով և *-ար* մասնիկով» (Հ. Աճառյան):⁶⁸ Մրա միջոցով կարելի է հասու լինել *Չարմայր* անձնանվան բուն իմաստին, նրանում տեսնելով հնագույն հայերենում ևս գործածված **արմա* «կառք, մարտակառք» բառը: Վերջինիս և *այր* «տղամարդ» բառի զուգորդմամբ (հմմտ. *այրեձի/այրուձի*)⁶⁹ ունեցել ենք **արմայր* «կառամարդ»/կառավար, կառամարտիկ» բառը, որին *q* սաստկականի հավելումով՝ *զարմայր*, այսինքն՝ «կառամարտիկների պե՛տ»: Մրանից էլ անձնանվանական կիրառմամբ (կամ ընկալմամբ)՝ *Չարմայր*:⁷⁰

Առմամիթոռնու անվան երկրորդ բաղադրիչի և *Միթոռնու* < **mithr-ē-os* անվան մեջ կարելի է առանձնացնել **միթռ-* հիմքը և *-ē-* վերջածանցը: Ըստ երևույթին, այս անվան բուն իմաստը «միթռավոր» է: Եթե ի նկատի առնենք **միթռ-*ի հետ համահունչ հուն. *μίτρα* «արևելյան խույր, փաթեց» և լատիներենից (որի աղբյուրը հունարենն է) փոխառյալ համարվող հայ. *միտր* «պսակ, խույր», *միթր* «լատին ոճով եպիսկոպոսական կամ քահանայական թագ» բառերի⁷¹ նախնական իմաստները, ապա *Միթոռնու* նշանակելու էր «թագավոր»՝ փոքրասիական քուրմ-արքաներին վայել տիտղոս կամ գահանուն: Հ. Աճառյանը, կասկածի տակ առնելով հուն. *μίτρα*

⁶⁵ *Георгиев, С. 122.*

⁶⁶ «Древнегреческо-русский словарь», составил И.Х. Дворецкий, т. I-II, М., 1958, т. I, С. 236; ИЯИ, т. II, С. 723.

⁶⁷ ՀԱԲ, հ. III, էջ 387-388:

⁶⁸ ՀԱԲ, հ. III, էջ 380: Հայ. *յարմար* < *յ-արմ-ար* բառը ուշագրավ է ինչպես հնդեվրոպական նախնական մոտ իր նշանակությամբ, այնպես էլ իր *յարմ-* մասով հուն. *ἄρμα//harma* «մարտակառք» բառի հնչյունական կողմի հետ ունեցած նմանությամբ:

⁶⁹ ՀԱԲ, հ. I, էջ 173:

⁷⁰ Այս դեպքում պետք է հրաժարվել *Չարմայր* անվան **զարմ* մասին տրված «ցեղ, սերունդ» ստուգաբանությունից:


⁷¹ ՀԱԲ, հ. III, էջ 320:

բառը *μῖτος* «թել» արմատից բխեցնող տեսակետը, գրում է. «Բայց չէ ստույգ. և հավանաբար Փոքր-Ասիականից փոխառություն է»:⁷² Հստ երևույթին, *Առնամիթոնեոս* <*Առնա-միթոնեոս* և *Միթոնեոս* արքայանուններում արտացոլված է անվանակիր անձանց գահակալության բնույթը: Եթե երկրորդ անունը բնորոշ է եղել քրմական գործառույթներով օժտված գահակալին, ապա առաջինը բնորոշ էր լինելու զինվորական գործառույթներով օժտվածին՝ կառավարողի կերևախավի ներկայացուցիչ գահակալին: Դա է շեշտել նրա անվան *Առնա-բաղադրիչը՝ Առնա-միթոնեոս*: Ամենայն հավանականությամբ, նույնախի երևույթի հետ գործունեք նաև մեր նահապետի և իր *Ջարմայր* <*Չ-արմ-այր* անվան դեպքում:

Հավելված



Նկ. 1



Նկ. 2

Խերական բանակի բազմացեղ կազմի խոստուն վկաներն են եգիպտական պատկերաքանակները: Դրանցից բերված նկար 1-ում գերի խերական մարտիկնե-

⁷² ՀԱԲ, հ. III, էջ 320:

րը ներկայացուցիչներն են եվրոպոլի ռասայի արմենոլի մարդաբանական տիպի (թերևս ծագումով Հայկական լեռնաշխարհից լինեն), նկար 2-ում պատկերված մարտիկները հիշեցնում են նույն ռասայի եվրոպաբնակ տիպերը (թերևս ասու-վացիներ լինեն):⁷³

ВОКРУГ ПАТРИАРХА ЗАРМАЙРА И “ХАЛДЕЙСКОГО” ЦАРСКОГО СПИСКА

Резюме

С. Петросян

В хеттском кодексе законов XIV в. до н.э. племена манда и сала упоминаются как хеттские подданные, ранее освобожденные от повинностей. О представителях этих племен говорится как о колесниках. Потомки манда и сала в виде нахарарских родов Мандакуни и Салкуни древней Армении выступают вместе как в труде Мовсеса Хоренаци (II, 8), так и в “Такнамаке” (47-е и 48-е листы) и “Зоранамаке” (14-е и 15-е листы). Близость обоих этих родов имеется и по местожительству. Мандакуни - владетели области Аршамуник, а Салкуни когда-то жили южнее Аршамуника в области Тарон. Предки этих родов также жили совместно в этих местах (к северо-западу от озера Ван). Что манда и сала были родственными племенами, вызывают особый интерес этнонимы Manda и Sala, которые этимологизируются на индоевропейско-армянской почве.

По Мовсесу Хоренаци, во время Илионской (Троянской) войны на помощь троянскому царю Приаму отправился служивший ассирийскому царю Тевтамосу армянин Зармайр (I, 20; I, 32). По всей вероятности, в греческом источнике этого рассказа первоначально речь шла не о стране Ассирия, а малоазийской стране Ассува, так как имя *Тевтамос* индоевропейского (фракийско-пеласгского) происхождения. Такого происхождения также большинство имен “Халдейского” царского списка. Такое заключение основывается на фактах, наиболее яркими из которых являются следующие имена: *Aralios, Balēos, Balotorēs, Lamparitēs, Lambaris, Derkulos, Peritias (-adēs), Lauostenis, Altados, Susaris, Mamithos, Mamidos, Maskalēos, Sparethos, Mithrēos, Armamithrēos.*

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Մարգիս Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող,
Մ.Նաիրանյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն,
Email: Yahel1996@mail.ru

⁷³ Տե՛ս Դերնի Օ., նշվ. աշխ., էջ 128-129 ներդիրի նկ. 5 և 6: Նաև՝ Gurney Օ., *Hetyci, Warszawa, 1970*, էջ 131, նկ. 13 և էջ 261, նկ. 56: